

## **Ֆրանսիական „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպությունը կվերանորոգի Վահան և Դպրաբակ համայնքների բուժկետերը**

25.08.2015

Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի միջև ստորագրված ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Օգոստոսի 25-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանն ընդունեց ֆրանսիական „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպության ծրագրերի համակարգող Օֆելի Կատոին և նույն կազմակերպության խորհրդի անդամ Ժան-Պոլ Մասնադային: Հանդիպումը կազմակերպվեց մարզի բուժկետերի վերանորոգում ծրագրի շրջանակներում, որտեղ նախատեսված էր համատեղ քննարկել մարզում առաջնահերթ համարվող բուժկետերի վերանորոգման, ինչպես նաև շինարարական կազմակերպություններ տրամադրելու վերաբերյալ հարցերը: Ըստ ներկայացվածի՝ 2015 թվականի ընթացքում „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպությունը Վարդենիսի տարածաշրջանում իրականացրել է առողջապահական ոլորտի աշխատակիցների վերապատրաստում, Ճամբարակի տարածաշրջանի համայնքներում բուժկետերի վերանորոգում, բժշկական սարքավորումներով վերազինում և շտապօգնության պայուսակների տրամադրում: Զրույցի ընթացքում „Բժշկական օգնություն և զարգացում,, կազմակերպության ներկայացուցիչները հայտնեցին, որ այս տարի Գրենոբլ-Սևան համագործակցության շրջանակներում նախատեսվում է վերանորոգել նաև Սևան քաղաքի „Բողբոջ,, մսուր-մանկապարտեզի բուժկետը: Իսկ Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի աջակցությամբ վերանորոգման ծրագրում առաջարկվեց ընդգրկել Ճամբարակի տարածքի Վահան և Դպրաբակ համայնքների բուժկետերը: Փոխադարձ համաձայնության արդյունքում կարճ ժամանակահատվածում նշված կառույցներում կմեկնարկեն նախագծով նախատեսված աշխատանքները: